Կայսերական ֆրոնտիրների ժառանգությունը

Սամվել Մելիքսեթյան

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Բովանդակություն

Ներածություն 3

Բնակչության միգրացիաները կայսրությունների շրջանում. սահմանը որպես բաժանարար սեգրեգացիայի գիծ 5

Ռուսական կայսրությունը և սեգրեգացիայի խորացումը 7

ԽՍՀՄ ժամանակաշրջան 12

Ախուրիկ և Մարգարա. երկու սահմանային գյուղերի օրինակներ 14

Ախուրիկ. Կարսի մարզի մի հատվածը Հայաստանում 14

Մարգարա. կյանքը փակ կամրջի կողքին 22

Ուսումնասիրելով հայ-թուրքական սահմանը՝ կայսերական մրցակցությունից մինչև Սառը պատերազմ և սահմանի փակում 1993 թվականին, այս հոդվածը ցույց է տալիս, թե ինչպես է սահմանի տեղաշարժը փոխակերպել լանդշաֆտը, դրա երկայնքով ապրող բնակչության կազմը և նրա առօրյա կյանքը: Սահմանային անցակետ ունեցող Ախուրիկ և Մարգարա գյուղերի համեմատական պատմությունների միջոցով այն բացահայտում է, թե ինչպես են կայսերական ֆրոնտիրները գործել ոչ միայն որպես բաժանարար գծեր, այլև որպես շփման, հիշողության և հակամարտության տարածքներ: Բանավոր պատմությունների վրա հիմնվելով՝ հոդվածը ուսումնասիրում է, թե ինչպես են միգրացիան, ոչ ֆորմալ փոխանակումները և խորհրդային ժամանակաշրջանի լռությունը ձևավորել «հակառակ կողմի» մասին ընկալումները: Այն վերլուծում է, թե ինչպես են սահմանային ենթակառուցվածքները՝ երկաթուղիները, կամուրջները և անցակետերը, դարձել իշխանության և գոյատևման գործիքներ:

Ներածություն

Ժամանակակից հայ-թուրքական սահմանը իր հստակ ուրվագծերն ու քաղաքական ձևակերպումը ստացել է 1921 թվականի Կարսի պայմանագրի արդյունքում: Սակայն դրա հիմքում ընկած է Օսմանյան, Պարսկական և Ռուսական կայսրությունների բազմադարյա ֆրոնտիրային գիծը, որը յուրաքանչյուր կողմում ձևավորել է յուրահատուկ հատկությունների ամբողջություն՝ աստիճանաբար խորացնելով այն տարբերությունները, որոնք սկզբնապես բավականին թույլ էին: Կայսերական սահմանների և վերահսկողության գոտիների տեղաշարժը հանգեցնում էր նաև դրանց հետ ասոցացվող երևույթների տեղաշարժին՝ լինի դա որոշակի էթնիկ և կրոնական խմբերի տեղաշարժը կամ բնակեցումը, եկեղեցական ազդեցության սահմանների փոփոխությունը, նոր ճարտարապետական ոճերի ի հայտ գալը կամ անգամ երկաթուղային գծերի լայնության տարբեր ստանդարտների կիրառումը, ստեղծելով յուրահատուկ բախում նույնիսկ այս հարցում:

Ժամանակակից հայ-թուրքական քաղաքական սահմանին համընկնող սահմանագիծն առաջին անգամ ձևավորվեց 1555 թվականին՝ Ամասիայի օսմանա-պարսկական հաշտության պայմանագրի արդյունքում, որը կայսրությունների միջև սահման հաստատեց Ախուրյան գետի հունը և Հայկական պար լեռնաշղթան, ստեղծելով նաև հայկական

բնակչության հիմնական երկու շրջաններ՝ օսմանյան («Տաճկահայաստան») և պարսկական (հետագայում՝ ռուսական, արևելյան Հայաստան և այլն): Արաքս գետը Արարատյան դաշտի հատվածում մնաց սահմանի ներսում, քանի որ կայսրությունների միջև սահմանն անցնում էր ավելի հարավային հատվածով՝ Արազի (Հայկական Պար) լեռնաշղթայի ջրբաժան գծով և Արարատ լեռով՝ ամբողջ Արարատյան դաշտը թողնելով մեկ կայսրության՝ Պարսկաստանի սահմաններում[1]:



Չնայած նրան, որ մինչև XIX դարի սկիզբը մի շարք նոր օսմանա-պարսկական պատերազմների արդյունքում այդ սահմանը կարճ ժամանակահատվածներով տեղաշարժվում էր, այն մշտապես վերադառնում էր իր հին գծին և պահպանվեց կայուն մինչև XIX դարի սկիզբը, երբ այն ժառանգվեց նաև Ռուսական կայսրության կողմից: 1805 թվականին՝ Շորագյալի սուլթանության նվաճմամբ (քաղաքական փոքր միավոր՝ ժամանակակից Շիրակի տարածքում), Ռուսական կայսրությունը

Քարտեզ 1 | Առաջին քարտեզի նկարագրությունը հետևյալն է՝ Հարավային Կովկասի քաղաքական քարտեզը Օսմանյան և Սեֆյան կայսրությունների տիրապետության շրջանում (16-17-րդ դդ.)
Всемирная история в 10-ти томах. Т. 4. Москва, 1958. С. 568; Глава XXIII. Народы Кавказа и Средней Азии в XVI и первой половине XVII в., http://historic.ru/books/item/f00/s00/z0000029/map26.shtml):

1 Всемирная история в 10-ти томах. Т. 4. Москва, 1958. С. 568; Глава XXIII. Народы Кавказа и Средней Азии в XVI и первой половине XVII в.

վերահսկողություն հաստատեց Ախուրյան գետով անցնող սահմանի մեծ մասի վրա: 1828 թվականին կայսրությունը գրավեց նաև Երևանի և Նախիջևանի խանությունները՝ ամբողջությամբ դուրս գալով Ախուրյան գետի ավազան և հասնելով Արարատ լեռան ստորոտ: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Ռուսական կայսրությունը գրավեց Կարսը, Արդահանը և Կաղզվանը՝ սահմանը տեղափոխելով դեպի արևմուտք: Իսկ արդեն 1918–1920 թվականներին՝ Հայաստանի կարճատև անկախության շրջանում, պետության կազմի մեջ մտավ նախկին Կարսի մարզի մեծ մասը, մինչև որ 1920 թվականի դեկտեմբերին Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրով հաստատվեց այն սահմանը, որը գրեթե նույնական է ներկայիս հայ–թուրքական սահմանին: Սահմանի վերջնական ամրագրումը կատարվեց 1921 թվականի հոկտեմբերին՝ Կարսի պայմանագրով:

Նշված քաղաքական իրադարձությունները էապես փոխեցին սահմանամերձ տարածաշրջանի կերպարը՝ առաջացնելով բնակչության խոշոր միգրացիոն ալիքներ, էթնիկ և կրոնական կազմի կտրուկ փոփոխություններ սահմանագծի երկու կողմերում, ինչպես նաև մշակույթի, կենցաղի, հաղորդակցությունների զարգացման ու անկման գործընթացներ:

Բնակչության միգրացիաները կայսրությունների շրջանում. սահմանը որպես բաժանարար սեգրեգացիայի գիծ

1555 թվականի Ամասիայի հաշտության պայմանագիրը ամրագրեց չեզոք գոտի Օսմանյան և Սեֆյան կայսրությունների միջև, որը ներառում էր Կարսի գրեթե ամբողջ տարածաշրջանը: Այդ տարածքի բնակչությունը կտրուկ նվազել էր պատերազմող կողմերի կիրառած «այրած հողի» մարտավարության հետևանքով: Ավերածությունները ավելի մեծ մասշտաբների հասան 1578 թվականին Օսմանյան կայսրության նոր ներխուժումից հետո և հաջորդած պատերազմների ընթացքում, որոնք շարունակվեցին մինչև 1639 թվականը՝ Զուհաբի հաշտության ստորագրումը: Նույն ժամանակահատվածում Սեֆյան շահ Աբաս Ի-ը

իրականացրեց հայ բնակչության լայնածավալ բռնագաղթ դեպի ժամանակակից Իրանի խորքերը, որը ընդգրկեց ներկայիս հայ-թուրքական սահմանի երկու կողմերում գտնվող ողջ ընդարձակ տարածքը:

Երկու կայսրությունների բախումների և պատերազմների շրջանը, որը պայմանավորված էր նաև կրոնական գործոններով[2] (սուննի և շիա իսլամի պաշտոնական կարգավիճակը որպես իշխանության հիմք), հանգեցրեց նրան, որ սահմանային գոտում յուրաքանչյուր կողմ փորձում էր բնակեցնել հնարավորինս լոյալ խմբեր՝ ժողովրդագրական կորուստները մասամբ վերականգնելու նպատակով: Պարսկական կողմում դրանք շիա հավատքի տարբեր թյուրքական ցեղեր էին, իսկ օսմանյան կողմում՝ սուննի քրդեր: Օսմանյան հատվածում կարևոր գործոն էր նաև հայկական և վրացական բնակչության մահմեդականացումը, որն ուներ ֆինանսական, քաղաքական և այլ պատճառներ, և որի շնորհիվ սահմանի օսմանյան հատվածում սուննի մահմեդականների տեսակարար կշիռը հետզհետե աճում էր: XVIII դարի սկզբին շիա-սուննի հակամարտության թուլացումն ու Ռուսաստանի մոտենալը տարածաշրջանին փոխեցին այս տրամաբանությունը: XVIII դարի վերջից Երևանի խաները վերաբնակեցման իրենց քաղաքականության մեջ սկսեցին ներգրավել գրեթե բոլոր մահմեդական վերաբնակիչներին՝ ներառյալ օսմանյան տարածքներից եկող սուննի քրդերին: Միևնույն ժամանակ Օսմանյան կայսրություն սկսվեց բնակչության արտահոսք՝ Ռուսական կայսրության կողմից նվաճված Հարավային Կովկասի տարածքներից: Մասնավորապես, ռուսների կողմից Վրաստանի և հարևան խանությունների գրավումից հետո (1801-1805 թթ.) Բորչալուից և Ղազախից դուրս եկան տեղի ղարափափախները և բնակություն հաստատեցին օսմանյան Կարսի տարածքում՝ հետագայում ձևավորելով շրջանի բնակչության կարևոր հատվածը, այդ թվում՝ հայ-թուրքական սահմանի հյուսիսային մասում:

Պետք է նշել, որ պատերազմներից ամայացած տարածքներում, այդ թվում հայկական բնակչության տեղահանությունների պատճառով, նոր հայկական բնակչության վերաբնակեցումը նույնպես տեղական

---

2 Օսմանյան կայսրությունում իշխող կրոնական դավանանքը իսլամի սուննի ճյուղն էր, իսկ սուլթանը 1517 թ.՝ Եգիտպոսի ու Արաբիայի գրավումից հետո ժառանգեց նաև խալիֆ տիտղոսը՝ որպես սուննի մահմեդականների ֆորմալ առաջնորդ: Սեֆյան Իրանում, իր հերթին, իշխող ժառանգությունը և իշխանության հենարան հանդիսացող ղզլբաշ ցեղերը շիա իսլամի դավանորդներ էին, նաև բռնությամբ տարածելով իսլամի այդ ճյուղը Իրանի և Կովկասի մահմեդական բնակչության շրջանում:

մահմեդական իշխանությունների քաղաքականության մաս էր կազմում: XVII դարի ընթացքում այդ նպատակով Երևանի կուսակալները իրականացնում էին արշավանքներ դեպի օսմանյան տարածքներ: Նույնիսկ տարածաշրջանի ավելի թույլ քաղաքական կազմավորումները, ինչպես օրինակ Քարթլիի թագավորությունը, վերաբնակեցման քաղաքականությունը օգտագործում էին իրենց ազդեցությունը ամրապնդելու համար: XVII դարում նրանք խրախուսում էին ամայացած Աշոցքի բնակեցումը, զուգահեռ ներգրավելով Աշոցքը, Չըլդըրը և Ջավախեթին Քարթլիի թագավորության տարածքում գտնվող Սանահինի վանքի եկեղեցական թեմում: Չնայած դրան՝ Նադիր շահը 1740-ականներին ավերեց այդ տարածքները՝ բնակչությանը բռնագաղթեցնելով Խորասան և ոչնչացնելով ժամանակակից հայ-թուրքական սահմանի հյուսիսային հատվածի վերջին բնիկ հայկական խումբը:

XVI–XVIII դարերի կայսերական պատերազմների արդյունքը դարձավ ժամանակակից հայ-թուրքական սահմանամերձ արևմտյան հատվածի գրեթե ամբողջական ամայացումը, և ապագա սահմանի երկայնքով հայկական բնակավայրերի գրեթե լիակատար անհետացումը Աշոցքից մինչ Երվանդաշատ:

Ռուսական կայսրությունը և սեգրեգացիայի խորացումը

Ռուսական կայսրության ընդարձակումը դեպի հարավ, Շիրակի նվաճումը (1805 թ.) և կենտրոնական Հայաստանի գրավումը (1828 թ.) էլ ավելի խորացրին Ախուրյանի երկու կողմերում էթնիկ և կրոնական պատկերի տարանջատումը՝ ավելացնելով նոր գործոն՝ քրիստոնեությունը: Մահմեդական բնակչությունը լքում էր Ռուսական կայսրության կողմից նվաճված տարածքները՝ Ախալցխան և Ախալքալաքը, տեղափոխվելով Օսմանյան կամ Պարսկական կայսրություն: Միաժամանակ սահմանագծի մյուս կողմում գտնվող հայկական բնակչությունը զանգվածաբար վերաբնակվում էր ռուսական տիրույթներ, ինչպես դա եղավ 1829 թվականին Կարսի փաշայության գրեթե ամբողջ բնակչության դեպքում, որը տեղափոխվեց Ախուրյանի արևելյան ափ և հաստատվեց

գրեթե անմարդաբնակ դարձած Շիրակում: Կարսի քաղաքաբնակները հաստատվեցին Գյումրի (ռուս. Гумры) բերդի մոտ (1837 թ.-ից՝ Ալեքսանդրապոլ), իսկ գյուղացիները՝ Շիրակի և Փամբակի գյուղերում: Վերաբնակիչների թվում կային նաև հույներ, որոնք հաստատվեցին Գյումրիում, Ալա-Քիլիսա (Բայթար, 1991 թ.-ից՝ Հովտուն) և Բայանդուր գյուղերում:



Քարտեզ 2 | Վարչաքաղաքական իրավիճակը Հարավային Կովկասում 18 րդ դարի վերջին- 19-րդ դարի սկզբին
https://www.iriston.com/nogbon/pictures/Tabol/etno_map/map04.jpg
Автор Цуциев А. Атлас этнополитической истории Кавказа

Այսպիսով, էթնո-կոնֆեսիոնալ գործոնները, դառնալով կայսրությունների բախման կարևոր գործոն, ուժեղացրին սահմանային հատվածներում լոյալ խմբերով ձևավորվող դեմգորաֆիկ սեգրեգացիան: XIX-րդ դարի ընթացքում Ախուրյանի աջ ու ձախ ափերի միջև հակադրությունը գնալով ավելի ակնհայտ էր դառնում: Ռուսական կողմում գրեթե անմարդաբնակ տարածքից ձևավորվեց Հարավային Կովկասի հայաբնակ ամենախիտ վարչական միավորը՝ Ալեքսանդրապոլի գավառը համա-

նուն քաղաքով, որը խոշորագույնն էր Հայաստանի տարածքում և որտեղ համատեղ ապրում էր ժամանակակից Հայաստանի տարածքի հայ բնակչության ավելի քան 20 տոկոսը:

Կարսի այն գյուղերը, որոնք լքվել էին հայերի կողմից, բնակեցվեցին հարավից գաղթած քրդերով՝ ձևավորելով սահմանի հարավային հատվածի պատկերը, որը պահպանվել է մինչև այսօր: Միևնույն ժամանակ Էրզրումից, Բասենից և Ալաշկերտից եկած օսմանյան հայերը նույնպես վերաբնակվեցին դատարկված գյուղերում՝ թե՛ ռուսական սահմանի մերձակայքի, թե՛ հողի բերրիության պատճառով, ինչը հանգեցրեց Կարսում հայկական բնակչության մասնակի վերականգնմանը:

1878 թվականին Ռուսական կայսրության կողմից Կարսի նվաճումը նոր փուլ էր՝ կայսերական ֆրոնտիրը տեղափոխելով դեպի արևմուտք: 1879 թվականի Կոստանդնուպոլսի հաշտության 7-րդ հոդվածի համա-

Քարտեզ 3 | Էթնոդեմոգրաֆիկ իրավիճակը 19-րդ դարի վերջին
https://www.iriston.com/nogbon/pictures/Tabol/etno_map/map12.jpg
Цуциев А. Атлас этнополитической истории Кавказа



ձայն՝ նվաճված տարածքների մահմեդական բնակիչները երեք տարվա ընթացքում կարող էին վաճառել իրենց գույքը և լքել կայսրության տարածքը: Այդ պատճառով Կարսի մահմեդական բնակչության մեծ մասը, որոնց թվում կային նաև Ախալցխայից, Ախալքալաքից և նույնիսկ Դաղստանից եկած վերաբնակիչների ժառանգներ, տեղափոխվեց Օսմանյան կայսրության հարավային և արևմտյան շրջաններ, իսկ իրենց փոխարեն տարածքում վերաբնակվեցին նոր խմբեր:

Ի տարբերություն նախորդ փուլերի, երբ հայ բնակչությունը հիմնական դեր էր խաղում Պարսկաստանից և Օսմանյան կայսրությունից ռուսների կողմից նվաճված տարածքների վերաբնակեցման գործում, այս ժամանակահատվածում Ռուսական կայսրությունը վարում էր նոր տարածքների գաղութացման քաղաքականություն այլ խմբերի միջոցով՝ ռուսներ (ներառյալ կրոնական փոքրամասնությունները), էստոնացիներ, հույներ և այլն, որոնք թշնամաբար էին տրամադրված հայկական մեծամասնությամբ նոր վարչատարածքային միավորի ձևավորմանը: Այդ քաղաքականության արդյունքում Կարսի մարզը դարձավ Հարավային Կովկասի ամենաբազմազան էթնիկ կազմ ունեցող միավորը: Միաժամանակ նաև Օսմանյան կայսրությունից այլ ճնշված խմբեր՝ ասորիներ, եզդիներ, ինչպես նաև մեծ թվով հայեր հաստատվեցին Կարսի մարզի տարածքում:

Կարսը դարձավ նաև Հարավային Կովկասում Ռուսաստանի գլխավոր ամրոցը և ռազմական տեսանկյունից ամենակարևոր տարածաշրջաններից մեկը: Դրա կապը կայսրության մյուս հատվածների հետ խթանեց Թբիլիսի–Ալեքսանդրապոլ–Կարս երկաթուղու (1899-1900 թթ.) և այլ հաղորդակցությունների կառուցումը, ինչպես նաև քաղաքաշինության ակտիվ զարգացումը՝ կայսերական ճարտարապետության ձևավորված ավանդույթներով:

Ռուսական կայսրությունը նոր տարածքները շարունակեց յուրացնել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթացքում նաև շարունակվեց հաղորդակցուղիների զանգվածային կառուցումը, ներառյալ Սարիղամիշ–Էրզրում նեղուղի երկաթուղին: Այս հաղորդակցուղիները ծառայում էին նաև որպես ճանապարհներ, որոնցով ժամանակակից Հայաստանի տարածք էին հասնում Ցեղասպանությունից փրկվածների նոր խմբեր: 1918 թվականի սկզբին Կովկասյան ճակատի անկումից և օսմանյան բանակի ներխուժումից հետո փախստական-

ների հոսքերը դարձան ավելի բազմամարդ՝ հատելով 1877 թվականի հին սահմանը և լքելով անգամ այն տարածքները, որոնք օսմանյան բանակն էր զբաղեցնում արդեն Հայաստանի ներկա տարածքում:

1918–1920 թվականների հակամարտությունները ուժեղացրին վերահսկողության սկզբունքով բնակչության համասեռացման հին միտումները: Թուրքական բանակի կողմից վերահսկվող տարածքներում գրեթե ոչ մի հայ չմնաց, իսկ հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներում մահմեդական բնակչությունը գրեթե ամբողջությամբ հեռացավ, բացառությամբ որոշ շրջանների, օրինակ՝ Աղբաբայի (Աշոցք): Նոր սահմանի երկայնքով դատարկված գյուղերը հիմնականում բնակեցվում էին փախստականներով, այդ թվում՝ այն բնակավայրերից, որոնք գտնվում էին սահմանի անմիջապես դիմաց, բայց մնացել էին «այն կողմում»: Հայ-թուրքական սահմանի երկայնքով ձևավորվեց նմանատիպ մի շարք հայկական և եզդիական (որոնք գաղթել էին Կարսի մարզից) գոտիներ, իր հերթին, Ախուրյանի հակառակ ափը լիովին կորցրեց հայկական բնակչությունը:

Քարտեզ 4 | Տարածքային փոփոխությունները 1921 թ. Կարսի պայմանագրով Ռուսական կայսրության շրջանի վարչական միավորների համեմատությամբ
Աղբյուր՝ https://www.cia.gov/readingroom/docs/CIA-RDP79-00976A000200010005-2.pdf

ԽՍՀՄ ժամանակաշրջան

XX դարի սկզբի հակամարտություններից հետո ձևավորված հայ-թուրքական սահմանը, Հայաստանի խորհրդայնացումից հետո, աստիճանաբար ավելի ու ավելի փակվեց՝ ԽՍՀՄ-ում ստալինյան ռեժիմի ուժեղացման և երկու երկրների միջև հարաբերությունների վատթարացմանը զուգընթաց: Թեև 1920-ականներին նկատվեց միջպետական հարաբերությունների ակտիվացում, որը արտահայտվեց նաև երկաթուղային կապի վերականգմանը և տնտեսական հարաբերությունների զարգացմանը նվիրված մի շարք համաձայնագրերով, իսկ 1925–1926 թթ. իրականացվեց սահմանի դելիմիտացիա և դեմարկացիա, 1930-ականներից իրավիճակը կրկին փոխվեց: Այն ավելի վատթարացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում և դրա ավարտից հետո, խորհրդային ղեկավարության կողմից Թուրքիայի նկատմամբ հնչեցված տարածքային պահանջներից հետո և հատկապես Թուրքիայի ՆԱՏՕ-ին անդամակցությամբ պայմանավորված: Խորհրդա-թուրքական սահմանին, սահմանային ռեժիմի խստացմանը զուգահեռ կառուցվեցին տարբեր տեսակի ինժեներական արգելապատնեշներ և փշալարեր, որոնց նպատակը երկու հարևան պետությունների միջև մեկուսացման խորացումն էր: Իր հերթին թուրքական կողմը նմանատիպ աշխատանքներ իրականացրեց իր տարածքում:

1940-ականների վերջից Թուրքիան սկսեց Էրզրում–Կարս սեփական երկաթուղու կառուցումը և ռուսական բանակի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կառուցված Էրզրում–Սարիղամիշ նեղուղի երկաթուղու վերակառուցումը: 1950-ականների սկզբին Սարիղամիշից մինչև Կարս և ԽՍՀՄ սահման Թուրքիան ամբողջությամբ փոխեց երկաթուղային գծերի լայնությունը՝ ռուսականից. անցնելով եվրոպական. ստանդարտի՝ ելնելով անվտանգության նկատառումներից: Ինչպես նշվում էր ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) 1952 թվականի զեկույցում խորհրդա-թուրքական սահմանի և հաղորդակցությունների վերաբերյալ.

> *«Թուրքիայի և Խորհրդային Միության միջև ռազմական գործողությունների դեպքում ռուսական լայնագիծ երկաթուղու 76 մղոնով*

ներթափանցումը Թուրքիայի տարածք կդառնար ԽՍՀՄ-ի համար հսկայական ռազմավարական առավելություն»[3]:

Նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև սահմանային գոտում հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձանների ավերումը կամ վնասումը, հատկապես այնպիսի համալիրների, ինչպիսին է Խծկոնքը: 1930-ականներից մինչև 1960-ականների սկիզբը երկրների միջև կանոնավոր երկաթուղային հաղորդակցություն գոյություն չուներ: Մեջբերված աղբյուրի համաձայն՝ երկաթուղին և Լենինական տանող հաղորդակցությունը օգտագործվում էին միայն շաբաթական մի քանի անգամ՝ փոստի փոխադրման և դիվանագիտական նպատակներով:

1961 թվականից ԽՍՀՄ–Թուրքիա հարաբերություններում սկսվեց որոշակի ջերմացում, որը արտահայտվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից ԽՍՀՄ-ի հրաժարմամբ, 1967–1973 թթ. կրկնակի դելիմիտացիա–դեմարկացիայի իրականացմամբ, երկաթուղային հաղորդակցության բացմամբ, ինչպես նաև առևտրատնտեսական կապերի ակտիվացմամբ: 1973 թվականին երկու երկրների միջև ընդունվեց Ախուրյանի ջրամբարի կառուցման որոշումը՝ 525 մլն խոր.մ. ծավալով: Ջրամբարի կառուցումը բերեց մի շարք սահմանային հայկական գյուղերի էվակուցիայի և նոր տեղերում հիմնադրմանը:

Այս հարաբերությունների ռեժիմը՝ խիստ պահպանվող սահմանով, հակադիր ռազմաքաղաքական դաշինքներին անդամակցությամբ և առևտրատնտեսական սահմանափակ շփումներով, շարունակվեց մինչև 1980-ականների վերջը, երբ «Պերեստոյկա»-ն ու Սառը պատերազմի ավարտը զգալիորեն խթանեցին ԽՍՀՄ–Թուրքիա հարաբերությունների զարգացումը, այդ թվում՝ երկաթուղային արտահանման աճը, որը 1989 թվականին հասավ 185 հազար տոննայի: Սակայն ԽՍՀՄ փլուզումը կանգնեցրեց այս գործընթացը, իսկ Ղարաբաղյան շարժման մեկնարկը և 1992–1994 թթ. պատերազմը հանգեցրին 1993 թվականին արդեն հայ-թուրքական սահմանի փակմանը՝ ներառյալ երկաթուղային հաղորդակցության կասեցմանը:

Այսպիսով, խորհրդային ժամանակաշրջանի մեծ մասի ընթացքում թուրք-խորհրդային սահմանը, այդ թվում Հայաստանի հատվածում,

---

3 Խոսքը 1520 մմ լայնության երկաթուղագծերի մասին է, որը ձևավորվել է Ռուսական կայսրությունում և պահպանվել ԽՍՀՄ-ում և բոլոր հետխորհրդային երկրներում:

մնաց փակ սահման՝ ինչպես բնական-աշխարհագրական օբյեկտներով (Արաքս և Ախուրյան գետեր, Ախուրյանի կիրճ), այնպես էլ արհեստական արգելքներով (սահմանային գոտու խիստ ռեժիմ, փշալարեր, պահպանություն և պարեկություն և այլն) պայմանավորված:

Ախուրիկ և Մարգարա. երկու սահմանային գյուղերի օրինակներ

Չնայած այն բանին, որ իր երկայնքի մեծ մասով հայ-թուրքական սահմանն անցնում է բնական-աշխարհագրական օբյեկտներով, որոնք դժվարացնում են երկու կողմերի միջև հաղորդակցությունը, այնուամենայնիվ գոյություն ունեն սահմանային հատվածներ, որոնք պատմականորեն հատվել են ակտիվ հաղորդակցություններով: Մինչև սահմանի ներկայիս տեսքով ձևավորումը, դրանք ամենաակտիվ շփման գոտիներն էին (Արաքսի մյուս ափի, Կարս-Ալեքսանդրապոլ-Թբիլիսի տարածաշրջանային առանցքի և այլնի հետ), իսկ խորհրդային շրջանում՝ Թուրքիայի Հանրապետության հետ հաղորդակցության կետեր էին՝ երկաթուղով (Ախուրիկ), կամ Թուրքիա-Հայաստան սահմանի գլխավոր ավտոմոբիլային կամրջի մոտ գտնվելու շնորհիվ (Մարգարա):

Ինչպե՞ս են ձևավորվել այս սահմանային բնակավայրերը, ինչպիսի՞ն էին շփումները մյուս կողմի հետ անցյալում, ինչպե՞ս են բնակիչները հիշում դրանք այսօր և ինչպե՞ս են պատկերացնում հայ-թուրքական հարաբերությունների ապագան:

Ախուրիկ. Կարսի մարզի մի հատվածը Հայաստանում

Ախուրիկ գյուղը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին՝ հայ-թուրքական սահմանին, այն կետում, որտեղ Կարս–Գյումրի երկաթուղին հատում է սահմանը: Երկաթուղուց բացի այստեղ կա նաև ավտոմոբիլային անցակետ (Գյումրի–Կարս), որը ապագայում, սահմանի բացման դեպքում,

կարող է դառնալ Երևանից դեպի Կարս և Թուրքիայի արևմտյան շրջաններ տանող ամենակարճ ճանապարհը: Ախուրիկի հանգույցը եղել է Կարս տանող հիմնական ճանապարհը Ռուսական կայսրության ժամանակաշրջանում՝ սկզբից խճուղու և 1900 թ.՝ Կարս տանող երկաթուղու տեսքով:

Չնայած Ախուրիկը Հայաստանի նախկին Ախուրյանի շրջանի գյուղերից մեկն է, ինչպես Ախուրյանի աջ ափի բոլոր բնակավայրերը, այն Կարսի նախկին մարզի մաս է կազմում, որը 1920 թվականից հետո մնացել է Հայաստանի կազմում: 1878 թվականին Ռուսական կայսրության կողմից Կարսի մարզի նվաճումից հետո այստեղ մնացին XIX դարի սկզբին ռուսներից փախած ղարափափախները, որոնք բնակեցրել էին նախկինում հայաթափված գյուղերը: 1886 թվականին Ախուրիկը (հին անվանումը՝ Ղարաքիլիսա կամ Թուրքի Ղարաքիլիսա) մտնում էր Կարսի գավառի Մոլլա-Մուսիի (հիմա՝ Ոսկեհասկ) գյուղական համայնքի կազմի մեջ և ուներ 410 բնակիչ, որոնք գրանցված էին որպես ղարափափախներ:

Քարտեզ 5 | Կարսի մարզից ՀՀ-ին անցած տարածքները և Ախուրիկը

Ի տարբերություն Ախուրիկից հյուսիս գտնվող խորհրդային Ամասիայի շրջանի գյուղերի, որտեղ ղարափափախները մնացին նաև 1920 թվականից հետո և 1926 թվականի առաջին խորհրդային մարդահամարում

գրանցվեցին որպես թուրք-օսմանցիներ (իսկ 1930-ականներից արդեն որպես ադրբեջանցիներ և մնացին այդ տարածքում մինչև 1988 թվականը), Ախուրիկում նրանք չմնացին և, ըստ ամենայնի, 1921 թվականին հեռացան թուրքական բանակի հետ միասին՝ Կարսի պայմանագրի համաձայն Շիրակը լքելուց հետո: Նրանց տեղը 1921 թվականի մայիսին զբաղեցրին հայ փախստականները՝ հիմնականում Մուշից (Վարդենիս գյուղից):

Գյուղի բնակիչները այս ընտրությունը բացատրում են հետևյալ կերպ. մշեցի փախստականներին առաջարկվել է երկու տարբեր վայր՝ Վեդիի շրջանը կամ Թուրքիայի սահմանին գտնվող Ախուրիկը, և նրանք ընտրել են Ախուրիկը՝ հույս ունենալով, որ սահմանը շուտով կբացվի, խաղաղություն կլինի, և նրանք ավելի արագ կկարողանան վերադառնալ Մուշ: Հայաստանի անկախությունից հետո նրանցից շատերը «ուխտագնացություն» են կատարել Մուշ, Վարդենիս գյուղ, որտեղից բռնագաղթվել էին իրենց նախնիները:

Ախուրիկում կան նաև մի քանի ընտանիքներ՝ թուրքական կողմում մնացած Բաշ-Ծորագյալի (ներկայում՝ Աքյակա) հատվածի հայկական գյուղերից եկած փախստականների ժառանգները: Սակայն եթե խորհրդային տարիներին պաշտոնական պատմագրությունը որոշ չափով թույլատրում և խրախուսում էր հիշողությունը Մուշի, Սասունի և Ցեղասպանության վերաբերյալ, ապա այն պատմական սյուժեները, որոնք չէին տեղավորվում այս մեծ նարրատիվի մեջ, մարդիկ հիշում էին «կոտրված» ձևով՝ հարմարեցնելով դրանք տարածված պատմությունեերին: Այդպես, 1918 կամ 1920 թվականների իրադարձությունները Կարսի տարածքում, որոնք ուղղակիորեն կապված չէին Ցեղասպանության պատմության հետ, այլ վերաբերում էին 1918–1920 թթ. Հայաստանի անկախության շրջանին և հայ-թուրքական պատերազմի հետևանքով տարածքային կորուստներին, խորհրդային տարիներին տեղավորվեցին Ցեղասպանության հիշողության ընդհանուր շրջանակի մեջ, քանի որ երկրորդ թեման քաղաքականապես արգելված էր: Խորհրդային շրջանում ձևավորված ընտանեական հիշողությունների և միկրո-պատմությունների ադապտացիան մակրո-պատմական խոսույթին տեղացիների պատմական հիշողության անբաժան մասն է: Արգելված թեմաները արտահայտություն են գտել միայն ընդունելի թեմաների շրջակում, թեև հաճախ այնքան են աղավաղվել, որ անճանաչելի են դարձել:

Ի տարբերություն հայ-թուրքական սահմանի մեծ մասի, որտեղ բաժանարար գիծ են հանդիսանում լայն գետը (Արաքսը) կամ կիրճը (Ախուրյանը), Ախուրիկի հատվածում երկու երկրների տարածքները բաժանվում են բարակ առվակով: Սահմանին հարող ամբողջ տարածքը մինչև 1990-ականների սկիզբը մշակվում էր և ոռոգվում Ախուրյանի ջրամբարի ջրերով: Գյուղացիները հիշում են, որ դաշտերում աշխատելիս հնարավոր էր զրուցել թուրքական կողմի գյուղացիների հետ, որոնք զարմանքով էին նայում խորհրդային կողմում կիրառվող գյուղատնտեսական տեխնիկային: Երբեմն հայ գյուղացիների թողած գործիքները անհետանում էին, բայց նույն գյուղացիները, ինչպես հիշում է Ախուրիկի բնակիչ Ջ.-ն, թուրքական կողմի գյուղացիներին փոխանցում էին տուկ կապելու թելեր և այլ անհրաժեշտ իրեր:

Խորհրդային և թուրքական կողմերի գյուղերի միջև սոցիալ-տնտեսական հակադրությունը հատկապես ակնառու էր մինչև 1970-ականների վերջը, երբ թուրքական կողմում նույնպես հայտնվեց էլեկտրական լուսավորությունը, իսկ հետո՝ գյուղատնտեսական տեխնիկան: Հայկական կողմում հողերը զանգվածաբար մշակվում էին մինչև 1990-ականների սկիզբը, երբ պոմպակայանը ապամոնտաժվեց և դադարեց գործել: Գյուղացիների բանավոր պատմություններում այդ շրջանի վերաբերյալ կարևոր տեղ է զբաղեցնում երկու երկրներում պայմանների փոփոխությունը. թուրքական կողմում վիճակը աստիճանաբար բարելավվում էր, մինչդեռ հայկական կողմում վատթարացումը կապվում էր 1990-ականների սկզբին գործող ռազմականացված խմբերի և անօրինական հափշտակումների հետ:

Գյուղացիների պատմություններում հայ-թուրքական սահմանի մասին հիշողությունները և Հայաստանի ու Թուրքիայի հարաբերություններին վերաբերող հարցերի շուրջ զրույցները հաճախ խաչվում են հայ-ադրբեջանական հարաբերությունների և խորհրդային շրջանում ադրբեջանցիների հետ շփումների հիշողությունների հետ: Իրավիճակի կարևոր առանձնահատկությունն այն է, որ գյուղացիների խոսքում և՛ ադրբեջանցիները, և՛ թուրքերը նշվում են նույն բառով՝ «թուրք», ինչի հետևանքով հարաբերությունների այս խաչումը մեծապես պայմանավորված է լեզվական գործոնով: Ախուրիկից հյուսիս՝ մինչև 1988 թվականը, գտնվում էին ադրբեջանական գյուղեր, որոնք մտնում էին Ամասիայի շրջանի կազմի մեջ, որոնցից ամենախոշորը Գյուլլիբուլաղն էր (ներկայում՝ Բյուրակն):

Ախուրիկում փոքր խանութի սեփականատեր Վ.-ն հիշում է, որ իր ընտանիքը հարաբերություններ էր պահպանում Գյուլլիբուլաղի ադրբեջանցիների հետ: Նրա հիշողություններում արտացոլում են ինչպես հայ և ադրբեջանցի գյուղացիների միջև շփումների աստիճանական ակտիվացումը խորհրդային վերջին տարիներին, այնպես էլ այն ընկալումները, որոնք ցույց են տալիս, որ երկու խմբերի միջև անվստահությունը լիովին չէր հաղթահարվել նույնիսկ 1980-ականներին: Դա, օրինակ, արտահայտվում էր ադրբեջանական տներում գիշերելու վախով: Նա նաև հիշում է, որ 2000-ականների սկզբին Սադախլոյի շուկայում (հայ-վրացական սահմանին) հանդիպել էր Գյուլլիբուլաղից տեղահանված ադրբեջանցի կանանց, որոնք կարոտով ու լացով էին հիշում իրենց անցյալը և տխրում էին իրենց տների համար՝ հետաքրքրվելով, թե ինչ վիճակում են դրանք այժմ, որքան են փոխվել և այլն:

Նման պատմությունները արտացոլում են ինքնության և իրականության ընկալման երկու տարբեր շերտեր: Մի կողմից՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ չկարգավորված հարաբերությունները, անցյալի տրավմաներն ու հետցեղասպանական շրջանում ձևավորված ընտանեկան հիշողությունները պահպանվում են, ուժեղացնելով անվստահություն և սկեպտիցիզմ հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորման հնարավորության նկատմամբ, քանի որ միջպետական հարաբերությունները հաճախ բացատրվում են անձնավորված շփումների միջոցով: Մյուս կողմից՝ ուշխորհրդային տարիներին մարդկային շփումների փորձը, «մյուս կողմի» մարդկայնացման հնարավորությունը, օտարի տան կորստի ծանրությունը հասկանալու ունակությունը ստեղծում են իրավիճակ, երբ օգտագործվում են տարբեր, երբեմն էլ հակասական փաստարկներ. մի կողմից կա անվստահություն և հակամարտության ժառանգություն, մյուս կողմից՝ մարդկային համակրանք մյուս կողմի ողբերգության հանդեպ և ընկալում, որ երկու կողմերն ունեն ընդհանուր գծեր:

Անվստահության և վախի առկայությունը, զուգորդված դրական փոփոխությունների հույսերի հետ, գյուղացիների պատմություններում համադրվում են խիստ հակասական կերպով: 2007 թվականին Ախուրիկից մի լրատվական հաղորդագրությունում[4], ԱՄՆ Ներկայացուցիչների

4 Closed Border Adds To Turkish-Armenian Estrangement

պալատում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հերթական քննարկման ֆոնին նշվում էր, որ գյուղի բնակիչները մտահոգված են, թե ԱՄՆ-ի կողմից Ցեղասպանության ճանաչումը կարող է պատճառ դառնալ Թուրքիայի ռազմական ներխուժման:

Ջ.-ն պատմում է մի պատմություն այն մասին, թե ինչպես 2010-ականներին, այսպես կոչված «ֆուտբոլային դիվանագիտության» շրջանում, Ախուրիկ էր եկել թուրք լրագրող-լուսանկարիչ Էյրանը, որը գյուղացիների հետ զրուցում էր հայ-թուրքական հարաբերությունների տարբեր հարցերի շուրջ, այդ թվում՝ սահմանի հնարավոր բացման: Նրան տարել էին գյուղի ամենատարեց բնակիչներից մեկի՝ Մուշեղի մոտ, որը Ցեղասպանությունը վերապրածների ժառանգ էր և կտրականապես հրաժարվել էր ընդունել Էյրանին՝ նրա վրա բարդելով Ցեղասպանության հավաքական մեղքը: Մյուս գյուղացիների պնդումներից հետո Մուշեղը, այնուամենայնիվ, համաձայնել էր զրուցել Էյրանի հետ՝ պատմելով իր ընտանիքի անդամների սպանության և փրկության պատմությունները, անդադար ընդգծելով, որ դա արել են «Էյրանի թուրքերը»: Վերջում նա ընկերացել էր Էյրանի հետ ու հրավիրել էր նրան իր տուն, հյուրասիրել և երկար ժամանակ չի թողել, որ գնա: Ջ.-ի խոսքով՝ Էյրանն իր հերթին ցավակցություն է հայտնել կատարվածի համար և, ցույց տալով Մուշեղի բակում մորթված ցուլը, ասել է, որ ինքը նույնիսկ հավ չի կարող մորթել, առավել ևս՝ մարդ, և որ ինքը մեղք չունի կատարվածի համար: Այս պատմությունը ծառայում է որպես դիդակտիկ օրինակ գյուղական աշխարհընկալման մեջ՝ ստեղծելով իրենց իսկ համար խնդրահարույց և հակասական ընկալում, որ ժամանակակից թուրքերը և Ցեղասպանությունը կատարած թուրքերը նույնը չեն, և որ ոչ բոլոր ժամանակակից թուրքերն են մեղավոր տեղի ունեցածի համար:

Ախուրիկում փոքր խանութի սեփականատեր Վ.-ն հիշում է նաև, թե ինչպես սկսվեց իր ծանոթությունը լրագրողների այդ խմբի հետ. նրա հին խանութը կոչվում էր «Վան», քանի որ իր ազգականների մի մասը վանեցի փախստականների ժառանգներ էին: Այդ փաստը հետաքրքրել էր թուրք լրագրողին, և հենց այդտեղից էլ սկսվել էր նրանց շփումը:

ԽՍՀՄ–Թուրքիա երկաթուղին և «գողացված սպորտային տաբատները»

Թուրքիայից Հայաստան մտնող երկաթուղու առաջին կայարանը գտնվում է Ախուրիկ գյուղի մոտ: Այն գործել է 1920-ականներին և վերագործարկվել է 1960-ականներին, երբ թուրքական կողմը արդեն փոխել էր երկաթուղային գծերի լայնությունը՝ ռուսականից անցնելով եվրոպականի: Խորհրդային տարիներին Կարս–Գյումրի երկաթուղին գործում էր միայն փոստի և բեռների (խոշոր եղջերավոր անասուններ, տեքստիլ, մեքենաներ և այլն) փոխադրման համար, թեև 1980-ականների վերջում, Վերակառուցումից հետո, իրականացվել էր նաև մեկանգամյա ուղևորափոխադրող զբոսաշրջային երթ Հայաստանից դեպի Թուրքիա[5]:

Երկաթուղիների լայնքի տարբերության պատճառով խորհրդային տարածքում ստեղծվել էր վագոնների փոխման և բեռնափոխադրման կայան: Ախուրիկի բնակիչների հիշողությունների համաձայն՝ գյուղացիներից շատերն աշխատում էին այդ կայարանում, որտեղ Թուրքիայից եկող անասունները բեռնաթափվում էին թուրքական վագոններից և բեռնվում խորհրդայինների մեջ, մինչև 1980-ական թվականներին կառուցվեց սահմանից մինչև Լենինական եվրոպական լայնության ուղիղ երկաթուղային գիծը, որը թույլ էր տալիս Կարսից բեռները հասցնել Լենինական առանց սահմանին կանգ առնելու: Թուրքիայից բերված անասունները մորթվում էին, իսկ միսը օգտագործվում էր Լենինականի մսի-պահածոների կոմբինատում երշիկների արտադրության համար:

Երկաթուղին գյուղացիների կյանքում թողել է նաև այլ հետքեր: Վ.-ն հիշում է, որ երեխաների համար երկաթուղին և կայարանը մի առեղծվածային աշխարհ էին, որտեղ նրանք սիրում էին տարբեր խաղեր խաղալ: Ճանապարհի պահակներից մեկը, աղբյուրից իրեն բերված ջրի դիմաց, թույլ էր տալիս երեխաներին խաղալ կայարանի տարածքում և անգամ նստել լոկոմոտիվների վրա: Կայարանի տարածքում երեխաների խաղերից մեկը ողբերգական ավարտ ունեցավ Թուրքիայից եկած գնացքի համար. երեխաները պատահաբար փոխել էին ուղեգծերի սլաքները, և կազմը, որը բեռնված էր «դեֆիցիտային իմպորտ» համարվող սպորտային տաբատներով, շրջվել էր: Գյուղացիները օգտվել էին իրավիճակից և դեֆիցիտային բեռի զգալի մասը թալանել: Գյուղացի-

5 How Armenian tourists went to Turkey by train some 27 years ago for the first and last time

ների պատմելով՝ խորհրդային իրավապահ մարմինների աշխատակիցները հետագայում շատերին ձերբակալել են, նույնիսկ ոմանց բանտարկել՝ գողության մեղադրանքով: Չնայած դրան՝ գնացքի վթարը դարձավ գյուղացիների հագուստի «թարմացման» աղբյուր՝ ԽՍՀՄ-ում հազվադեպ ու մոդայիկ հագուստով:

Սահմանի հնարավոր բացումը

Այն հարցին, թե ինչ կարող է տալ հայ-թուրքական սահմանի բացումը Ախուրիկին և ինչպես են բնակիչները վերաբերվում նման հնարավորությանը, գյուղացիները, որպես կանոն, անմիջապես չեն պատասխանում՝ փորձելով հասկանալ հարց տվողի քաղաքական դիրքորոշումը: Ներհայաստանյան քաղաքական պայքարն ու բևեռացումը, որոնք առնչվում են նաև հայ-թուրքական կարգավորմանը և սահմանի բացման հարցին, ստիպում են նրանց զգուշավոր լինել, քանի որ սահմանի բացման դրական ընկալումը կամ անհրաժեշտության շուրջ համաձայնությունը կարող է որպես «ոչ հայրենասիրական» դիրքորոշում ընկալվել և նրանց դարձնել քննադատության թիրախ: Այդ պատճառով սկզբում կարևոր է համոզվել, որ զրուցակիցը չի դատապարտում նման ընտրությունը:

Նախնական շփումից հետո, այդ թվում՝ թեմայից դուրս հարցերի շուրջ, ձևավորվում է վստահություն, և զրուցակիցը պատրաստ է ավելի բաց արտահայտել իր դիրքորոշումը: Հաճախ նույն դիրքորոշումը համատեղում է ինչպես զգուշությունը, այնպես էլ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական կարգավորման վերաբերյալ մտահոգությունները, և այն միտքը, որ ժողովուրդների և պետությունների միջև թշնամանքը չափազանց խորն է արմատացած, հետևաբար ամեն ինչ հեշտ չի լինելու: Միաժամանակ, մի քանի նախադասությունից հետո կարող է հակառակ միտքը հնչել, որ կարելի է կողք կողքի ապրել, ունենալ տնտեսական համագործակցություն, առևտուր, ինչպես դա անում են այլ երկրները, և որ այս ամենում ոչ մի արտառոց բան չկա:

Վ.-ն պատմում է, որ գյուղում երբեմն հայտնվում են թուրքական բեռնատարներ, որոնք սխալմամբ են այստեղ հասնում. չիմանալով, որ հայ-թուրքական սահմանը փակ է՝ վարորդները նավիգացիայում նշում են Կարսին ամենամոտ անցակետը, հասնում գյուղ և միայն տեղում

պարզում, որ սահմանը փակ է և որևէ հաղորդակցություն չկա: Վ.-ն նշում է, որ շատ թուրք վարորդներ վախենում են դուրս գալ մեքենայից, բայց գյուղացիները նրանց առաջարկում են հեռախոսների լիցքավորում, ջուր, հյութ և այլն, ինչը փոխում է վարորդների վերաբերմունքը և ընկալումները:

Սահմանի բացման անհրաժեշտության օգտին բերվող փաստարկներից մեկն այն է, որ Թուրքիայի հետ առևտուրը այսպես թե այնպես իրականացվում է Վրաստանի միջոցով՝ հարստացնելով վրացական կողմին: Զգուշավոր լավատեսությունը, որ սահմանի բացումը օգուտ կբերի հայկական կողմին, հաճախ հիմնվում է այն մտքի վրա, որ հայերը տաղանդավոր և ձեռներեց են ու արագ կկարողանան հաստատել անհրաժեշտ հարաբերությունները: Ջ.-ն որպես օրինակ բերում է Կարսը. *«ամբողջ Կարսը հայերն են կառուցել, ասում է նա, – այն մեկ առ մեկ նման է Գյումրիին, և եթե սահմանը բացվի, մենք այսօր էլ կարող ենք նրանց վրա ավելի մեծ ազդեցություն ունենալ, քան նրանք՝ մեզ վրա»:*

Մարգարա. կյանքը փակ կամրջի կողքին

Ի տարբերություն Ախուրիկի, որի տեղադրությունը կապված է վերջին հարյուրամյակների կայսերական սահմանազատումների հետ և որտեղ խորհրդային տարիներին պահպանվում էր կապը թուրքական կողմի հետ երկաթուղու միջոցով, Մարգարան գտնվում է համեմատաբար երիտասարդ սահմանագծի վրա: Մինչև 1920 թվականը Արաքսից հարավ գտնվում էր Սուրմալու անունով հայտնի շրջանը, որը 1555 թվականից եղել էր Պարսկաստանի մաս, 1828 թվականից՝ Ռուսական կայսրության, իսկ 1918–1920 թվականներին՝ Հայաստանի Հանրապետության:

XIX դարի սկզբին Մարգարան կամ Մարգարի գյուղը (ինչպես այն նշած է նաև ռուսական պաշտոնական աղբյուրներում) Արաքսի հյուսիսային ափին պահպանված քիչ հայկական գյուղերից մեկն էր: Բնակիչների պատմելով՝ հին գյուղը գտնվել է ներկայիս գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևելք, որտեղ պահպանվել է հին գերեզմանատունը, իսկ ներկայիս գյուղը հիմնադրվել է 1810 թվականին Մարգար անունով մի

արհեստավորի կողմից, որից էլ առաջացել է գյուղի անվանումը: Գյուղի դիրքը կարևոր էր, քանի որ հենց Մարգարայի մոտ էր գտնվում XIX դարի սկզբին Արաքսի վրայով անցնող գլխավոր լաստանավային անցումը՝ Երևանից դեպի Իգդիր և Բայազետ տանող ճանապարհին:

XIX դարի ընթացքում Մարգարայի մոտ գտնվող անցումը դարձավ Երևանի և Սուրմալուի գավառի միջև հաղորդակցության հիմնական ուղին, և հենց այստեղ կառուցվեց Արարտյան դաշտում Արաքսի վրայով միակ փայտե կամուրջը: Ռուս-թուրքական պատերազմների և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում այդ կամուրջը ծառայեց նաև որպես զորքերի շարժման գլխավոր ուղի դեպի Բայազետ և Ալաշկերտ, ինչպես նաև որպես փախստականների հոսքերի ճանապարհ Բայազետից, Ալաշկերտից և Վանից: 1914 թվականի նոյեմբեր–դեկտեմբերին հայկական մամուլի էջերը լի էին Մարգարա հասնող անվերջ փախստականների ծանր պատկերներով, որոնք ժամանակավոր ապաստան էին գտնում գյուղացիների տներում:

Քարտեզ 6 | Երևան-Իգդիր գլխավոր խճուղին 20-րդ դարի սկզբին, որն անցնում էր Մարգարա և Ալիջան գյուղերով
Военно-топографическая карта Кавказского края, 1903 год
http://www.etomesto.ru/download.php?map=kuban_dorozhnaya



Արաքսի հարավային ափին՝ Մարգարայի դիմաց, գտնվում էր նույնպես հայաբնակ Ալիջան գյուղը, որը սկզբում ավելի մեծ էր (1831 թվականին՝ Մարգարայում՝ 111, Ալիջանում՝ 120 բնակիչ)։ Մինչև 1920 թվականի հայ-թուրքական պատերազմի ավարտը այս կամուրջը հանդիսանում էր Սուրմալուի ճակատում գեներալ Դրոյի (Դրաստամատ Կանայան) հրամանատարության մատակարարման հիմնական զարկերակը։ 1920 թվականի նոյեմբերին, հայկական բանակի նահանջից և Իգդիրի (Սուրմալուի գավառի) հայ բնակչության տարհանումից հետո, Դրոն հրամայել էր այրել Արաքսի կամուրջը, որպեսզի թուրքական բանակը չկարողանա այն օգտագործել Երևանի վրա հարձակվելու համար։

Հայ-թուրքական պատերազմի ժամանակ գյուղացիների վրա դրված տարբեր պարտականությունները, օգնությունը ռազմաճակատին և պատերազմի վտանգները պահպանվել են գյուղացիների հիշողություններում, սակայն խորհրդային տարիներին հայ-թուրքական պատերազմի թեմայի արգելքի պատճառով այդ հիշողությունները ներառվել են թույլատրելի սյուժեի մեջ՝ 1918 թվականի Սարդարապատի ճակատամարտի մասին (որի ընթացքում Դրոն Ապարանում էր)։ Պատմության արգելված դրվագվների ադապտացիան թույլատրելի սյուժեներին այն հիմնական առանձնահատկություններից է, որ բնութագրում է պահպանվող խորհրդային շրջանի ազգային ինքնությունը։

Չնայած այն բանին, որ Արաքսի վրա գլխավոր կամուրջը գտնվում էր հենց Մարգարա գյուղի հատվածում, Խորհրդային ողջ ընթացքում սահմանը այստեղ մնաց փակ։ Սուրմալուից եկած փախստականների առկայությունը, սահմանային դիրքը և գյուղի համար համեմատաբար բարձր կրթական ցենզը դեռ ցարական տարիներից պատճառ դարձան, որ ստալինյան շրջանում գյուղը, բնակիչների պատմելով, ավելի շատ տուժեց ստալինյան բռնաճնշումներից։ 1940-ականներին գյուղը շրջապատվել էր փշալարերով, իսկ մուտքի մոտ տեղադրվել էր անցակետ։ Ռեժիմային սահմանափակումները ձևավորեցին յուրահատուկ տեղական մշակույթ, որի մասին գյուղացիները կատակով ասում են, որ բավական է անծանոթ մարդը հայտնվի գյուղում և խոսի ինչ-որ մեկի հետ, և մի քանի րոպե անց կողքին կհայտնվեն իրավապահ մարմինների ներկայացուցիչները։

1945 թվականին թուրքական կողմը կրկին քանդեց Մարգարայի կամրջի իր հատվածը՝ կանխելու համար խորհրդային բանակի

հնարավոր ներխուժումը ԽՍՀՄ–Թուրքիա հարաբերությունների վատթարացման և տարածքային պահանջների ֆոնին: Լարված հարաբերությունները պահպանվեցին մինչև 1960-ականների սկիզբը: Մինչ օրս պահպանված բետոնե կամրջի կառուցումը իրականացվել է 1963–1964 թվականներին, և գյուղացիների հիշողությամբ՝ այն կառուցվել է խորհրդային տարբեր հանրապետություններից ժամանած բազմազգ բրիգադների մասնակցությամբ: Խորհրդային տարիներին կամուրջը ծառայել է միայն հազվադեպ դիվանագիտական-վարչական շփումների համար և սահմանախախտների վերադարձի նպատակով:

Պատմության նախկին ուսուցչուհի Կ.-ն պատմում է, որ խորհրդային տարիներին գյուղի յուրաքանչյուր երեխա գիտեր, որ պետք է ուշադիր հետևել գետին և սահմանախախտ նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնել մեծահասակներին և սահմանապահներին: Ինքը՝ Կ.-ն, սահմանապահներից պարգևներ է ստացել այդպիսի օգնության համար: Գյուղի բնակիչները չեն հիշում, որ խորհրդային տարիներին Մարգարայի կամրջով իրականացվեին բեռնափոխադրումներ կամ ավտոմոբիլային երթևեկություն:

Միայն 1980 թվականին սկսվեց Մարգարա–Ալիջան անցակետի կառուցումը՝ երկրների միջև բեռնատար ավտոմոբիլային հաղորդակցություն բացելու նպատակով, սակայն նախագիծը չավարտվեց խորհրդա-թուրքական հարաբերությունների հերթական վատթարացման պատճառով: 1991 թվականից մինչև 1993 թվականին սահմանի փակումը այստեղով անցել է Սիրիայից Հայաստան ուղղված հումանիտար օգնությունը և մի քանի դիվանագիտական առաքելություններ, այդ թվում՝ Հայաստանի պատվիրակությունը 1992 թվականի Սևծովյան տնտեսական համագործակցության գագաթնաժողովին մասնակցելու ճանապարհին: Գյուղացիների մի մասի պնդմամբ, 1900-ականների սկզբին կամրջով նաև իրականացվել է խոշոր եղջերավոր անասունների խոշոր խմբաքանակի անօրինական վաճառք, ինչը մերժում են մյուս գյուղացիները:

Այսպիսով, ունենալով պատրաստի ենթակառուցվածքներ, Մարգարայի Արաքսի կամուրջը չի գործել 1920 թվականից ի վեր, մինչ այդ ապահովելով ակտիվ կապ Երևանի և Սուրմալուի գավառի միջև: Եթե Ախուրիկի բնակիչների համար խորհրդային տարիներին դաշտային աշխատանքների ժամանակ հակառակ կողմի թուրք գյուղացիների

հետ շփումները ոչ խրախուսվող, բայց հաճախակի հանդիպող պրակտիկա էին, իսկ տուկի թելերի, ծխախոտի և այլ մանր իրերի փոխանցումը սովորական երևույթ էր, ապա այստեղ նման շփումներ չեն եղել՝ թե՛ աշխարհագրական պայմանների (Արաքսի լայն հունը որպես բաժանարար գիծ), թե՛ տեղանքի առանձնահատկությունների, թե՛ սահմանային ռեժիմի ավելի խիստ դրսևորումների պատճառով:

Արաքսի հակառակ ափի՝ Ալիջան գյուղի կյանքի մասին մարգարեցիները դատում էին բարձր ձայներից, որոնցից ամենահստակ լսվողը ազանի՝ մահմեդական աղոթքի կանչի ձայնն էր: Մարգարայում, Ախուրիկի նմանությամբ, նշում են, որ մինչև 1970-ականները Ալիջանում անգամ էլեկտրական լուսավորություն չկար, և այնտեղի կյանքը զգալիորեն տարբերվում էր հայկական ափից: Այժմ գյուղի բնակիչները նշում են թուրքական կողմի ակտիվ զարգացումը, ինչը շատերին մտահոգում է:

2025 թվականի սկզբին ռուս սահմանապահները լքեցին Մարգարայի անցակետը և հայ-թուրքական սահմանի հարակից հատվածը, և անցակետում հայտնվեց Հայաստանի դրոշը: Մի քանի ամիս անց թուրքական կողմը նույնպես բարձրացրեց իր դրոշը: Գյուղի կենտրոնում տեղի ունեցած բուռն քննարկումների ընթացքում հնչեցին տարբեր մեկնաբանություններ, այդ թվում նաև այն, որ թուրքերը վախենում էին ռուսներից և այդ պատճառով չէին բարձրացնում իրենց դրոշը, իսկ հիմա այլևս չեն վախենում: Մյուս տեսակետը այն է, որ սա շուտափույթ բացվող սահմանի նշան է:

Մարգարայի և Ախուրիկի օրինակները, հետաքրքիր ընդհանրություններ ունենալով հանդերձ, նաև ավելի մեծ տարբերություններ են ի ցույց դնում: Ավելի ծանր տնտեսական պայմաններում գտնվող Ախուրիկում սահմանի բացման հետ կապված դրական ընկալումները ավելի շատ են, քան Մարգարայում, որտեղ նաև Ախուրիկի նման մասնակի բաց սահման կամ շփումներ հակառակ կողմի գյուղացիների հետ չեն եղել խորհրդային տարիներին: Միաժամանակ, երկու դեպքում էլ, պատմական հիշողության հիմնական մոդելը և խոսույթները դեռևս խորհրդային են, որոնց վրա զարգացել է նաև որոշակի «ազգային» պատում: Երկու դեպքերում էլ Հայաստանում բևեռացող քաղաքական խոսույթը ազդում է գյուղացիների պատասխանների վրա՝ թե՛ անցյալի, թե՛ ներկայի, թե՛ ապագայի վերաբերյալ: Սահմանի բացման դրական ընկալումը, եթե նույնիսկ կա, դիտարկվում է որպես վտանգավոր դիրքո-

որոշում, որը կարող է քննադատության թիրախ դարձնել և՛ համայնքի ներսում, և՛ դրանից դուրս: Դա է պատճառը, որ գյուղացիները նախընտրում են բավականին երկար լսել տարբեր կարծիքներ, համոզվել, որ քննադատության չեն արժամանանա ու միայն դրանից հետո արտահայտել սեփական մոտեցումը, որը հաճախ կարող է ավելի համարձակ ու հեռատես լինել: Ախուրիկից Ջ.-ն, որը կողմ էր սահմանի բացմանը և համարում էր, որ դա դրական ազդեցություն կունենա Հայաստանի համար, սկզբում փորձում էր ցույց տալ, որ դա հայրենասիրական մոտեցում է և, որ մենք երկուսս էլ հայ ենք, հետևաբար իր դիրքորոշումը չի կարող վտանգավոր լինել Հայաստանի համար: Մարգարայում թեժ բանավեճ ծավալվեց այս հարցերի շուրջ, որի ընթացքում մասնակից գյուղացի տղամարդիկ հիմնականում պաշտպանում էին հակառակ թեզեր, մինչև որ մասնակիցներից մի քանիսը հաստատեցին իրենց աջակցությունը սահմանի բացմանը և փոխեցին բանավեճի ուղղությունը և աջակցություն հայտնողների թիվը:

Այս հոդվածում արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետը:

Երևան 2026